«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի համապատասխան:

Դաստիարակ՝ **Սվետա Թելունց**

Մանկապարտեզ՝ **« Վերիշենի ՆՈՒՀ » ՀՈԱԿ**

Գորիս 2023

Բովանդակություն

Բովանդակություն 2
Ներածություն 3
Դաստիարակի աշխատանքների պլանավորումը չափորոշչին համահունչ 5
Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը ՆՈՒՀ-ում 10
Գործնական մաս 13
Դիտորդներ 19
Եզրակացություն 21
Օգտագործված գրականություն 22

Ներածություն

Թեմայի արդիականությունը Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության ու դաստիարակության ապահումը որպես մանկավարժական գործընթաց և հասարակության կայուն զարգացման անհրաժեշտություն:

Խմբերում ուսուցման օգտակարության աստիճանը կախված է նրանից, թե որքանով են դաստիարակները տիրապետում իրականացվող ուսումնական ծրագրին, մեթոդներին ու ռազմավարություններին, որոնց օգնությամբ կարելի է երեխաների ուսուցման արդյունավետությունն առավելագույնի հասցնել:

Որոշ երեխաներ կարող են շատ ավելի բարձր ցուցանիշներ դրսևորել, քան սահմանում են չափորոշիչները, ոմանք՝ մի քիչ ավելի ցածր: Երեխաների տվյալ տարիքին համապատասխան զարգացման և ուսումնառության հետ կապված ակնկալիքների մասին մտածելիս կարևոր է ուշադրություն դարձնել նրանց անհատական առանձնահատկություններին: Երեխաները տարբեր են՝ կախված իրենց բնածին ունակություններից, փորձից, առողջական վիճակից և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են: Անհրաժեշտ է հարգանք դրսևորել բոլոր երեխաների նկատմամբ, նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են տարբեր տեմպերով զարգանալ ու սովորել, հասկանալ շրջապատող աշխարհը և արտահայտել իրենց սեփական աշխարհը:

Չափորոշչային պահանջների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացման հետ մեկտեղ զարգանում են նաև երեխայի խոսքն ու լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական հմտությունները և այլն: Հետևաբար, երեխայի համակողմանի զարգացման համար կարևոր են բոլոր ոլորտները և պետք է հավասարապես արժևորվեն:

Չափորոշիչներն այն ուղենիշներն են, որոնք մանկավարժները կարող են

օգտագործել տարբեր ոլորտներում երեխաների զարգացմանը նպաստելու համար:

Նախադպրոցական կրթության չափորոշչի փոփոխությունը պայմանավորված է հանրակրթության պետական նոր չափորոշչի ընդունմամբ, որտեղ նախադպրոցական կրթությունը դիտարկվում է հանրակրթության նախնական աստիճան և նպատակ ունի ապահովել նախադպրոցական կրթության համակարգից երեխայի սահուն անցումը դեպի հանրակրթություն:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը և երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի անձը հարգելու, համատեղ ուսումնառության գործընթացը խթանելու հնարավորություն է ընձեռում:

Չափորոշչով սահմանվում են երեխայի լեզվական և հաղորդակցական,ֆիզիկական կրթության, առողջ ապրելակերպի, ճանաչողական, սոցիալական, քաղաքացիական, թվային, մեդիա, մշակութային, մաթեմատիկական, տեխնիկական և այլ կարողություններ:

Աշխատանքի նպատակն է՝

Ներկայացնել դատիարակի աշխատանքի պլանավորումը չափորոշչային վերջնարդյունքներին համահունչ

Նպատակից բխող խնդիրներն են՝

- Ուսումնասիրել պլանավորման գործընթացի էությունը,
- դրա անհրաժեշտությունը
- Վերլուծել չափորոշչային վերջնարդյյունքները
- Ներկայացնել դաստիարակի աշխատանքի պլանավորման օրինակ չափորոշչային վերջնարդյունքների դիտարկմամբ

Ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործունեություն չի կարող գոյություն ունենալ առանց ուսուցչի աշխատանքի նախնական մասնագիտական պլանավորման: Աշխատանքի ճիշտ կազմակերպումը թույլ է տալիս ընդգծել նպատակներն ու խնդիրները, նշել աշակերտների արդյունքները, որոշակի ժամանակահատվածի ձեռքբերումները: Ինչպես մեթոդաբար ճիշտ ձևակերպել թեմատիկ կրթական գործընթաց նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

Մանկապարտեզային կյանքի շարժիչ ուժերը որպես մանկական կազմակերպիչներ, դաստիարակներն են: Դաստիարակը ղեկավարվում է ծրագրով և այն կենսագործում է պլանավորման միջոցով: Նպատակաուղղվածության պլանավորման, կանխատեսման, վերահսկման և արդյունքների ու դրանց հետևանքների գնահատման հիմունքների ուսուցումը կատարվում է խաղային և ոչ խաղային հնարների զուգորդման, դաստիարակի ու երեխաների միջև դերերի բաշխման միջոցով:

Պլանավորումը մանկավարժության մեջ կրթական գործընթացի կառուցումն է այնպես, որ կոնկրետ մանկական թիմում ուսումնական պլանի խնդիրները լուծվեն առավելագույն արդյունավետությամբ;

Ուսումնական գործընթացի հիմքը պլանավորումն է: Պլանը ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների մանկավարժական գործունեության նախագիծ է: Պլանավորումը նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական գործընթացի գիտականորեն հիմնավորված կազմակերպումն է, որը տալիս է նրան բովանդակություն, որոշակիություն, վերահսկելիություն:

Նախադպրոցական հաստատությունում դաստիարակության և կրթական աշխատանքի պլանավորումը հիմնական կրթական ծրագրի իրականացման գործընթացի կառավարման հիմնական գործառույթներից է և արտացոլում է մեծահասակների և երեխաների գործունեության կազմակերպման տարբեր ձևեր:

Ուսումնադաստիարակչական աշխատանքում, թեմատիկ պլանավորման ժամանակ մեծ նշանակություն ունի առավոտյան զրույցի կազմակերպումը երեխաների հետ: Այն համարվում է մանկավարժական աշխատանքի

կարևորագույն բաղկացուցիչ մաս, քանի որ նպաստում է երեխաների խոսքի և մտածողության զարգացմանը:

Զրույցը որևէ թեմայի նպատակային քննարկում է, կազմակերպված, նախապատրաստված երկխոսություն~ նախապես ընտրված թեմայի շուրջ: Զրույցն օգնում է երեխային՝ ծանոթանալ շրջապատող աշխահի հետ և նպաստում է խոսքի զարգացմանը:

Նախադպրոցական կրթությունն այսօր մեծ փոփոխություններ է կրում, որոնց հիմքը դրել է պետությունը, որը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այս ոլորտի զարգացման նկատմամբ:

Նախադպրոցական ուսումնական հաստատության կոլեկտիվի աշխատանքը իրականացվում է հաստատության աշխատանքային պլանին համապատասխան: Ցանկացած պլան կառուցվում է ընթացիկ և առաջիկա (հեռանկարային) աշխատանքների միասնության մեջ նվազագույն ջանքերի ներդրմամբ՝ կոնկրետ նպատակներին հասնելու, վերջնական որոշումների կայացման բարձր արդյունավետությամբ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ պլանն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն հենվում է մանկավարժական գիտության նվաճումների, առաջավոր փորձի ուսումնասիրության, տվյալ փուլում ծառացած և հեռանկարային խնդիրների հաշվառմամբ:

2021 թվականին մայիսի 13 ՀՀ ԿԳՄՍ-ն հաստատեց նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը,որն իր մեջ ներառում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

3. Չափորոշիչը ներառում է՝

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

4. Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

5. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

6. Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝

երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին:

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝

երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել:

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝

երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ:

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝

նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

5) թվային և մեդիա կարողունակություն՝

երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում:

6) մշակութային կարողունակություն՝

երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը:

7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝

երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին:

8) տնտեսական կարողունակություն՝

երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները:

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝

երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին:

Շարժողական ոլորտում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներն են. վաղ մանկության տարիքում երեխան ինքնուրույն կամ մեծի օգնությամբ կարողանում է սողալ, սկսում է ինքնուրույն քայլել, կարողանում է ակտիվ գործողություններ կատարել առարկաներով որոշակի արդյունքի համար, շարժողական գործողությունների ժամանակ դրսևորում է ինքնուրույնություն և այլն:

Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը ՆՈՒՀ-ում

Ուսուցման և դաստիարակության գործընթացին անդրադարձել են բազմաթիվ հայտնի մանկավարժներ:

Շվեյցարացի նշանավոր մանկավարժ Իոհան Հայնրիխ Պեստալոցցին մեծ ներդրում ունի մանկավարժության ՝ որպես գիտության և պրակտիկայի զարգացման գործում:

Դաստիարակության նպատակը, ըստ Պեստալոցցու, մարդու բոլոր բնական ուժերի ու ընդունակությունների զարգացումն է, ըստ որում զարգացումը պետք է լինի բազմակողմանի և ներդաշնակ: Դաստիարակի ներգործությունը երեխայի վրա պետք է համաձայնեցված լինի նրա բնության հետ: Ոչ մի դեպքում մանկավարժը չպետք է ճնշի աճող մարդու բնական զարգացումը: Դաստիարակը, նրա կարծիքով, այդ զարգացումը պետք է դնի ճիշտ ուղղու վրա, վերացնի այն արգելակներն ու ազդեցությունները, որոնք կարող էին այն կասեցնել կամ շեղել մի այլ ուղղությամբ:

Դաստիարակության հիմնական սկզբունքը, ինչպես դա հասկանում էր Պեստալոցցին, համաձայնեցվածությունն է բնության հետ: Սակայն նպատակաուղղված դաստիարակությունը միանգամայն անհրաժեշտ է ամեն մի մարդու, քանի որ ինքն իրեն թողնված, տարերայնորեն զարգացող մարդը չի կարող հասնել մարդկային իր բոլոր ուժերի ներդաշնակ զարգացման այն աստիճանին, որ պահանջվում է նրանից, որպես հասարակության անդամի:

Ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին մանկավարժության կարևոր հիմք է համարում անհատի ձևավորումը և ակտիվությունը. ‹‹երեխաների ձգտումը,մի շարք գործողությունների հանդեպ, բնորոշ է ցանկացածին, և դա հոգեբանության հիմնական օրենքն է››,- ասել է նա: Իր ‹‹Աշխատանքն իր հոգեբանական ու դաստիարակչական նշանակությամբ›› հոդվածում, նշում է որ աշխատանքն առաջին հեթին նյութական կյանքի հիմքն է և ֆիզիկական, գեղագիտական, մտավոր և բարոյական զարգացման համար անհրաժեշտ պայման:

Բացի այդ, աշխատանքը համարվում է նաև ճանաչողական, հուզական և կամային գործընթացների զարգացման, երեխայի կարողությունների և խառնվածքի ձևավորման կարևոր նախապայման:

Ըստ Ուշինսկու, կրթության բաղադրատարրերից ամենակարևորը բարոյական դաստիարակությունն է: Այն իր մանկավարժական հայեցակարգի կորիզն է, և ‹‹դա ավելի կարևոր է, քան գլուխը գիտելիքներով լցնելը››: Կրթությունը, որը զուրկ է բարոյական հատկանիշներից, ոչնչացնում է մարդուն: Բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի

հայրենասիրություն, մարդասիրություն, ազնվություն, ուղղամտություն, աշխատասիրություն:

‹‹Խաղը, ազատ և անկախ գործողություն է, որին դաստիարակը չպետք է միջամտի…: Խաղալիքները մեծ նշանակություն ունեն››,-ասել է Ուշինսկին: Ուշինսկին արժեքավոր ներդրում է ունեցել մանկավարժական մտքի զարգացման մեջ, և խորը վերլուծել է ինչպես դպրոցականների կրթության, դաստիարակության տեսությունն ու պրակտիկան, այնպես էլ նախադպրոցականներինը: ‹‹Դաստիարակության առարկան մարդն է և եթե մանկավարժությունը ցանկանում է դաստիարակել մարդուն՝ բոլոր առումներով,նախ և առաջ պետք է ճանաչի նրան››: Ուշինսկին մեծ ուշադրություն է դարձնում սկզբնական ուսուցմանը: Նա գրում է, որ ‹‹ինչքան փոքր է տարիքը, այնքան մեծ պետք է լինի անձի մանկավարժական վերապատրաստումը…սկզբնական դպրոցը պետք է դնի ընդհանուր դպրոցի հիմքը և նպաստի անհատի դրական հատկանիշների առաջացմանը››:

Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ,թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ» :

Ռուսոյի մանկավարժական հայացքների հիմքում ընկած են բնական և ազատ դաստիարակության սկզբունքները: Մարդը, ըստ Ռուսոյի, իր դաստիարակությունը ստանում է բնությունից, իրերից և մարդկանցից: Նրա դաստիարակությունը կարող է արդյունավետ լինել, եթե այդ երեք գործոնները ձգտեն միևնույն նպատակին, չհակասեն իրար, այլ համագործակցեն իրար հետ:

Եվ քանի որ բնությունից ստացած դաստիարակությունը մեզանից չի կախված, իրերից ստացած դաստիարակությունը մասամբ է մեզանից կախված, և միայն մարդկանցից ստացած դաստիարակությունն է կախված մեզանից, ուրեմն՝ «բնության դաստիարակությանը, որի հանդեպ մենք անզոր ենք, պետք է ուղղել մյուս երկուսը»:

Բնական դաստիարակություն ասելով՝ Ռուսոն հասկանում էր այնպիսի դաստիարակություն, որը համապատասխանում է երեխայի բնական զարգացման ընթացքին՝ նրա բնական ընդունակություններին ու նախադրյալներին, նրա պահանջմունքներին ու առանձնահատկություններին:

Լինելով տաղանդավոր պրակտիկ և թեորիկ Վասիլի Ալեքսանդրեվիչ Սուխոմլինսկին պրակտիկորեն դիտարկում էր դաստիարակության բոլոր ասպեկտները՝ տեսությունը և գործնականը, դիդակտիկան և դպրոցագիտությունը: Նրա աշխատությունների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում այն պրոբլեմը, որ մանկավարժը իր մասնագիտական աշխատանքին սետեղծագործաբար մոտենա, ինչը սոցիալական հսկայական նշանակություն ունի: «Զրույց դպրոցի երիտասարդ տնօրենի հետ» գրքում Սուխոմլինսկին գրել է. ‹‹Եթե դուք ցանկանում եք, որ մանկավաժական աշխատանքը ուսուցչին ուրախություն պատճառի, այլ չվերածվի ձանձրալի և ամենորյա միապաղաղության, ապա ուսուցչին դուրս բերեք հետազոտողի արահետ: Դաստիարակի աշխատանքի հաջողությունը հնարավոր է միայն մասնագիտության և ստեղծագործության համատեղությամբ, երեխաների հոգևոր կյանքի խորը գիտությամբ, ամեն մի երեխայի առանձնահատկությունների իմացությամբ»:

Հիմնականում Սուխոմլինսկին ուշադրություն էր դարձնում մեծացող սերնդի մեջ քաղաքացիականության դաստիարակությունը: Նա շարունակեց զարգացնել ուսմունքը կոլեկտիվում դաստիարակության պրոցեսի վերաբերյալ, մշակեց մեթոդիկա առանձին աշակերտի հետ կոլեկտիվում աշխատելու վերաբերյալ:

«Սիրտս նվիրում եմ երեխաներին» գրքում Սուխոմլինսկին պարզ ցույց է տալիս, որ երեխաների հարմոնիկ զարգացմանը ուղղված, դաստիարակի աշխատանքի հաջողությունը հնարավոր է միայն ամեն մի երեխայի հոգևոր կյանքի և զարգացման առանձնահատկությունների խորը իմացության դեպքում:

Դաստրարակության մոդելը, որի հիմքում ընկած է հումանիտար հոգեբանության ուղղությունը, 50-60ական թվականներին ԱՄՆ-ում զարգացրել են այնպիսի գիտնականներ ինչպիսիք էին Մասլոուն, Ֆրանկը, Ռոջերսը, Կոլլինը, Կոմբսը և այլք:

Գործնական մաս

Հետազոտությունն անց եմ կացրել Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ավագ խմբում: Հետազոտությանը մասնակցել են 18 սան: Ես նրանց համար բարձրաձայն կարդացել եմ Ծառլ Պերոյի <<Կարմիր գլխարկը>> հեքիաթը: Երեխաներին հանձնարարել եմ ուշադիր լսել իմ կարդացածը,որովհետև իմ կարդալուց հետո իրենք պիտի պատմեն այն: Հեքիաթը կարդալուց հետո ես հարցեր ուղղեցի երեխաներին՝

1 Ինչու՞ էին աղջկան անվանում Կարմիր գլխարկ:

2.Ո՞ւր էր գնում Կարմիր գլխարկը:

3.Ի՞նչ էր տանում տատիկին:

4.Ճանապարհին ո՞ւմ հանդիպեց Կարմիր գլխարկը:

5 Գայլն ի՞նչ ասաց Կարմիր գլխարկին:

6 Կարմիր գլխարկը հավատա՞ց գայլին:

7 Ո՞վ փրկեց տատիկին ու Կարմիր գլխարկին:

Երեխաներից 10-ը շատ ակտիվ պատասխանում էին տրված հարցերին: Հեքիաթի միջոցով զարգանում է երեխայի խոսքը,նպաստելով խոսքի ճիշտ և հստակ արտահայտելուն: Զարգացնող խոսքը նպաստում է անձի վրա ամբողջապես, և անձի զարգացման ցանկացած կողմ նպաստում է լեզվի զարգացմանը:

Իսկ 8 սանի փորձում էի ներգրավել պատասխաններում զարգացնելու համար նրանց լեզվամտածողական կարողունակությունը:

Հարցերը տալուց հետո՝ ամրապնդելով նյութը երեխաների հիշողության մեջ ես առաջարկեցի ըստ ցանկության պատմել հեքիաթը:Երեխանեից 6-ը ցանկություն հայտնեցին վերարտադրել կարդացածս:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ լեզվամտածողական կարողունակության վերջնարդյունք ստացանք 6 երեխայի մոտ:

Պարապմունքից հետո երեխաներին տվեցի թղթեր և գունավոր մատիտներ,հանձնարարեցի նկարել այն ինչ հասկացել են հեքիաթից:Երեխաները բոլորը սիրով նկարեցին Կարմիր գլխարկին, տատիկին, գայլին, անտառ ու արև,ճանապարհ ու ծաղիկներ:

Աղյուսակի տեսքով ներկայացրել ենք նաև պլանավորման օրինակ՝ հաշվի առնելով չափորոշչային պահանջները:

Պլանավորման օրինակ

Մաթեմատիկա

Թեմա - Ընդեղենի չափում

Նպատակը - սովորեցնել չափել ընդեղենը պայմանական չափանմուշի միջոցով

Խնդիրները պայմանական չափանիշների օգնությամբ որոշել հեղուկ և սորուն մարմինների չափը

-ամրապնդել տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունները օգտվելով ուղղություն ցույց տվող սլաքներից:

-զարգացնել համրանքը 9 -ի սահմանում թիվը մեկով մեծացնելու և փոքրացնելու կարողությունը

Անհրաժեշտ պարագաներ՝ 2 թափանցիկ թաս, մեկը լցված ոլոռով մյուսը դատարկ չափաբաժակ, թեյի գդալ, թվանշաններ 1-9 շրջանիկներով քարտեր,փայտիկներ:

Վերջնարդյունք

-Կճանաչի 1-9 թվանշանները

-Կգնահատի իր և ընկերների աշխատանքը

-Կաշխատի մաքուր և կոկիկ

երկուշաբթի	
Կարողունակություն	Լեզվական և հաղորդակցական
Խոսքի զարգացում	Կարմիր գլխարկ հեքիաթը
Նպատակը	տիրապետել գրական հայերենին, դրսևորել խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին

Խնդիրները	զարգացնել բառապաշարը, ամրապնդել հիշողությունը, վերարտադրել լսածը և արտաբերել նոր սովորած բառերը:
Նկարչություն	<<Կարմիր գլխարկ>> հեքիաթի հերոսներին:
Նպատակը	ամրապնդել պատկերացումները հեքիաթի հերոսների մասնին
Խնդիրները	կատարելագործել բարին չարից տարբերելու կարողություն
Վերջնարդյունք	-Կարողացան արտաբերել նոր բառեր - սովորեցին տարբերակել չարն ու բարին - կարողացան արտաբերել կապակցված խոսք -նկարելու միջոցով կարողացան վերարտադրել լսածը

երեքշաբթի	
Կարողունակություն	մաթեմատիկական և տեխնիկական
Մաթեմատիկա	Երկրաչափական պատկերներ
Նպատակը	սովորեցնել տարբերել երկրաչափական պատկերները
Խնդիրներ	Երկրաչափական պատկերները օգտագործել ապլիկացիա պատրաստելիս
Կառուցողական ապլիկացիա	Մեծ տուն
Նպատակը	սովորեցնել ապլիկացիայի միջոցով կառուցել մեծ տուն: Քառակուսին անկյունագծով ծալել 2 հավասար մասի բաժանելու , ծալման

	գծից մկրատով ուղիղ կտրել և ստանալ տանիք եռանկյուն
Խնդիրները	Զարգացնել մաքուր աշխատելու կարողություն
Վերջնարդյունք	- երեխաները տարբերում են երկրաչափական պատկերները -թղթից կարողացան ստանալ այդ պատկերները - կարողացան գեղեցիկ կտրել թղթերը -մաքուր և կոկիկ համաչափ կպցնել երկրաչափական պատկերները - ստացան տուն

չորեքշաբթի	
Կարողունակություն	Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն
Ֆիզ դաստիարակ.	Օղակով վարժություններ
Նպատակը	արագ կողմնորոշվելու ցատկելու ընդունակություն
Խնդիրներ	Շաժվել մեկ շարքով՝ քայլել իրար ետևից,կազմել եռյակներ
Էկոլոգիա	Մաքուր օդը որպես առողջության պահպանման միջոց
Նպատակը	Սովորեցնել թե ինչպես մաքուր պահել օդը տարատեսակ թափոններից

Խնդիրներ	Մաքուր օդում մարզվելը առողջության պահպանման միջոց
Վերջնարդյունք	-Կատարում են հրահանգները -Սովորեցին լինել կազմակերպված -հասկացան մաքուր օդի դերն ու նշանակությունը - հասկանում են ֆիզ. դաստիարակության դերը առողջության պահպանման գործում հատկապես մաքուր օդում

հինգշաբթի	
Կարողունակությունն	տնտեսական
	Աշխատանք,մասնագիտություն
Նպատակը	Ձևավորել երեխաների մասնագիտական հետաքրքրությունները , ծանոթանալ մի շարք մասնագիտությունների առանձնահատկություններին
Խնդիրներ	Ձևավորել հարգանք ցանկացած աշխատանքի հանդեպ
Նկարչություն	Մասնագիտություն
Նպատակը	Զարգացնել գաղափար մասնագիտության մասին, որը նախընտրում է երեխան
Խնդիրներ	Պատկերացում կազմել տվյալ մասնագիտության կարևորության և անհրաժեշտության մասին
Վերջնարդյունք	երեխաները ակտիվ թվարկում են մանսագիտությունները -կարողանում են միտք արտահայտել մասնագիտությունների մասին

	-հարգանքով են արտահայտվում աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ -երեխաները նկարեցին իրենց նախընտրած մասնագիտությունը -կարողացան հասկանալ իրենց նախընտրած մասնագիտության գործառույթները

ուրբաթ	
կարողունակություն	ժողովրդավարական և քաղաքացիական
Էկոլոգիա	Մաքուր բնություն
Նպատակ	Երեխաներին ներկայացնել մաքուր բնության անհրաժեշտությունը
Խնդիրները	Մաքուր պահել շրջակա բնությունը, խնամքով վերաբերվել բույսերին ու ծառերին:
Աշխատանք	
Նպատակ	Սովորեցնել երեխաներին ինքնուրույն աշխատել
Խնդիրները	Առանց վնասելու բնությունը փխրեցնել հողը.ջրել ծառերը,ծաղիկները:
Վերջնարդյունք	-կարողացան հասկանալ բնության կարևորությունը - մաքուր պահելու անհրաժեշտությունը -որպես քաղաքացի հայրենի բնությունը շենացնելու պարտավորությունը

Դիտորդներ

Տնորեն ՝ Հերմինե Առուստամյան

Մեթոդիստ ՝ Օվսաննա Դիլանյան

Պարապմունքը անցակացվեց ավագ խմբում դաստիարակ՝ Սվետա Թելունցի կողմից: Պարապմունքը ինտեգրված էր, որն իր մեջ ներառում էր մի քանի մեթոդիկաներ՝ խոսքի զարգացում, էկոլոգիա և ծանոթացում շրջապատին , նկարչություն

Տևողությունը՝ 40 րոպե

Պարապմունքը հագեցած էր բազմաթիվ թեմատիկ դիդակտիկ նյութերով: Ամբողջ խմբասենյակը պատկերված էր համապատասխան նկարներով: Տիրում էր շատ աշխույժ, խաղային միջավայր: Դաստիարակը հասավ իր նպատակին, որովհետև տարբեր ինտերակտիվ միջոցներով ամփոփվեց ամբողջ թեման :

Պարապմունքը իր կառուցվածքով լինելով ինտեգրված՝ ներառում էր գրաճանաչության, էկոլոգիայի և նկարչության մեթոդիկաները: Կառուցվածքով բազմաբնույթ էր, հագեցվածությամբ՝ խաղային, զարգացնող՝ խթանման փուլի ապահովմամբ:

Ինտեգրված պարապմունքի ընտրված ձևը և կառուցվածքը նպատակային էր այնքանով, որ երեխաների համար ստեղծված էր համապատասխան միջավայր, որն էլ իր հերթին նպաստում էր, որ երեխաները ավելի ուշադիր, հաճույքով և մեծ հետաքրքրությամբ ներգրավեն իմաստի ընկալման փուլ, որն էլ տարավ արդյունավետ կշռադատման փուլ:

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է և արդիական նախադպրոցական կրթության մեջ, այն ամբողջական էր, երեխայակենտրոն և միտված էր երեխաների զարգացմանը: Պարապմունքի ընթացքում դաստիարակը կիրառեց նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդներ, այլընտրանքային նկարչության տարրեր, որոնց միջոցով երեխաների մոտ ձևավորվում և զարգանում են կապակցված խոսքը,քննադատական մտածողությունը, սեփական կարծիքը արտահայտելու կարողությունը, արագ կողմնորոշումը և այլն: Դաստիարակը հասավ իր նպատակին, քանի որ իր կողմից պլանավորված թեման ամբողջությամբ երեխաները յուրացրեցին:

Վերիշենի ՆՈՒՀ-ն Տնօրեն՝ Հերմինե Առուստամյան

Մեթոդիստ՝ Օվսաննա Դիլանյան

Եզրակացություն

Ուսումնասիրելով մեր աշխատանքի թեմայի վերաբերյալ հոգեբանական և մեթոդական գրականությունը, մենք եկանք այն եզրակացության, որ պլանավորումը կառավարման հիմնական գործառույթն է, որի լիարժեք իրականացումը դաստիարակության արդյունավետությունն ապահովող հիմնական գործոններից մեկն է: Այն սահմանվում է որպես ուսումնական աշխատանքի հերթականության, հաջորդականության վաղ որոշում՝ նշելով կիրառվող անհրաժեշտ պայմանները, միջոցները, ձևերն ու մեթոդները: Պատշաճ պլանավորման դեպքում հնարավոր է դառնում կանխատեսել յուրաքանչյուր առանձին աշխատողի արդյունքները, ինչը հեշտացնում է ընդհանուր նպատակներին և խնդիրներին հասնելը:

Արդի նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրն է տարբեր տիպերի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ձևավորել և զարգացնել նախադպրոցական կրթական չափորոշիչներին ու կրթական ծրագրային պահանջներին համապատասխան երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, արդի ներդաշնակ զարգացման պատշաճ մակարդակ:

Ապահովելով մանկավարժական որակը՝ ըստ մանկավարժների և կրթությանը ներկայացվող չափորոշիչների, մենք կկարողանանք ճիշտ, նպատակային, գրագետ, հետաքրքիր, ժամանակակից մոտեցում ցուցաբերել և երեխաներին ներկայացվող չափորոշիչներով համապատասխան սերունդ կրթել:

Նախադպրոցական կրթության համակարգի զարգացման ներկա պայմաններում մանկավարժական գործընթացի կազմակերպման մոտեցումների բազմազանությունը, նրա անձին ուղղված կողմնորոշումը, նոր սերնդի ծրագրերի օգտագործումը, բնականաբար, պահանջում են պլանավորման մոտեցումների փոփոխություններ:

Ուսումնական գործընթացի պլանավորման ժամանակակից համակարգը ներառում է նախադպրոցական ուսումնական հաստատության զարգացման ծրագիր, նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական ծրագիր, վերջնական մանկավարժական վերլուծության կառուցվածքը և տեսակները, նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքի պլանավորումը:

Այսպիսով, պլանավորումը գործընթաց է, որի արդյունքը նպատակների հստակ ձևակերպումն է և այն միջոցների ու մեթոդների որոշումը, որոնցով կհասնեն նպատակներին. սա առաջիկա գործունեության համակարգի մշակումն է, գործունեության նպատակների և խնդիրների ձևակերպման կարգը:

Օգտագործված գրականություն

1. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ 2018թ
2. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6տարեկանների) կրթական համալիր ծրագիր 2007թ
3. Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում 2007թ
4. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական թարիքում (մեթոդական ուղեցույց մանկապարտեզների դաստիարակների համար)